ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1-ին տողի 6-րդ սյունակում ⑥1 000 000⑦թիվը փոխարինել ⑥950 000⑦թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ռ. ՍԱՆՈՅԱՆ

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Հակոբյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ⑥ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ⑦ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 42-Ն որոշմամբ հաստատված գներով հողամասի գնման վերաբերյալ չեն ներկայացվել հայտեր, ինչի պատճառով 2016 թվականի մայիսի 5-ին հայտարարված աճուրդը համարվել է չկայացած (աճուրդը չկայացած համարելու մասին արձանագրություն N 2):

Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտություն է առաջացել հողամասի մեկնարկային գների մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ⑥ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ⑦ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու ⑥Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 24-ի N 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին⑦ որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ պակասեցումներ չեն նախատեսվում:

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզիԳյումրի համայնքի
ավագանու 2016թվականի
մարտի 24-ի N 42-Ն որոշման

# ՑՈՒՑԱԿ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը Մակերեսը քառ.մ | Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թբիլիսյան խճ.1-ին թաղ. N 41/4 10-րդ գոտի | 08-001-1211-0008 250.0 | Բնակավայրերի այլ հողեր | Բնակելի տան կառուցում | 950 000 |
| 2 | Ալեք Մանուկյան փող. N 22/2 8-րդ գոտի | 08-001-0702-0006 111.23 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 900 000 |
| 3 | Մուշ-2 թաղ. 9-րդ փող. N 1/2 11-րդ գոտի | 08-001-0083-0152 201.6 | Բնակավայրերի այլ հողեր | Հասարակական սպասարկման օբյեկտի կառուցում | 810 000 |

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա. Հակոբյան